

ՈՐՈՎԱՅՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Որովայնակոչութիւնն է անանկ կերպով մը խօսիլը որ կարծուի թէ ձայնը ստամոքսէն կամ փորէն կ'ելլայ : Հիներն ալ այսպէս կը մտածէին , որոնք ստուգած են շատերու վրայ այս կարողութիւնս :

Գիտունները միաբան չեն որովայնակոչութեան բնութեանը վրայ . առջի Ժամանակները կը կարծուէր որ ձայնը կը յօդանար փորու խողովներուն մէջ , իսկ հիմա ցուցուած է որ սխալ է աս կարծիքս , բայց դեռ հակառակութիւններ կան այս կրկնակ ձայնին կազմութիւնը բնախօսօրէն հաստատելու համար : Աբբայն Նոլէ կը կարծէր որ այս ձայնը շնչաուութեան ատենը եղած հնչմունքէ մը առաջ կու գար , այսինքն օդին խրուչափողը մտնալու միջոց : Գաղղիացի Լէսբանեօլ բժիշկը , որուն կանխահաս մտհըր մեծ կորուստ եղաւ գիտութեան , ուրիշ կարծիք մ'ունեցած է . 1811ին Բարիզու բժշկաց ժողովքին առջև խօսած ճառին մէջ հաստատած է որ որովայնակոչներուն բոլոր գաղտնիքը կը կայանայ ձայնը արգիլելուն վրայ որ չկարենան մտնալ քթին փորոքներուն մէջ , իբր թէ զանոնք խղզելով կոկորդէն ելլալու ատեննին : Ռիչուան իր Տարերք բնախօսութեան գրքին մէջ կը պնդէ ընդհակառակն թէ որովայնակոչութիւնը զանգաղ և աստիճանաւոր շնչատուութենէ մը կը պատճառի , ուսկից առաջ մեծ շունչ մ'առնելով որովայնախօսը թղբերուն մէջ շատ օդ կը մտցընէ և կամաց կամաց դուրս կը հանէ զայն :

Ժամանակաւ որովայնակոչները կը համարուէին իբրև արտունացեալ անձինք . Ոսկերբան կախարդասար մարդիկներու տեղ կը դնէր զիրենք , և կը կարծէր շատերու հետ որ քանի մը խաբերայ քրմերու մարգարէական փորը պատգամներ կու տար : Հեթանոսները շատ անգամ ձեռք առած են ու

րովայնակոչութիւնը աւելորդապաշտ ժողովուրդները խաբելու համար , և խիստ հաւանական է որ եռոտանոցն վրայ ճապկըտող և ինքզինքը աստուածարեալ ձեացընող հարցուկ պիթոնուհին ճարտար որովայնակոչ մ'ըլլայ :

Ինչ որ ալ է նէ Ռիչուանի կարծիքը զօրացած կ'երևի , և գիտունները ընդհանրապէս համոզուած են այս օրուան օրս որ ոչ ոք կը ծնանի անանկ մասնաւոր գործարաններով ինչպէս որովայնակոչները կը հաստատեն թէ ընդունած ըլլան բնութենէն : Չայնին մէջ եղանակներ փոփոխելու առաւել կամ նուազ մեծ կարողութիւնը կը կախուի ձայնական կազմածին կոճիկներուն փափկութենէն և ճկունութենէն :

Որովայնակոչութիւնը մասն էր ծածուկ գիտուէց , որոնց գաղտնեացը միջամուխ եղողները միայն ունէին բալլիքը . և այս արուեստիս տէրերը՝ որոնց սկզբունքները անասելի բաներ են , մեծապէս ըզգուշացած էին յայտնելու ասանկ ամենակարող հնարք մը որով կը խաղային ժողովրդոց դիւրահաւանութեանն հետ . մարդագայերը ¹ , հոգեգէշները ² , վրհուկներն ու դերը իրաւցընէ շատ օգտակար ծառայութիւններ կ'ընէին այս խաբերաններուն , որոնք ամեն ջանք կը թափէին գաղտնիքը դուրս չհանելու համար : Նախընթաց դարէն ՚ի վեր է որ որովայնակոչութիւնը եւրոպայի թատրոնները երեցաւ և ստորագրուեցաւ Պ . Լա Շարէլի ձեռքով :

Չանց կ'ընենք ըսելը թէ ինչ էր որովայնակոչութիւնը Հրէից , Եգիպտացուց և Հռովմայեցուց ժամանակ . հիներուն որովայնակոչութեան պատճառը չգիտնալը խիստ ձեռնտու եղած էր այս կրօնական խաբէութեանց , որով դիւրահաւան ժողովուրդը շատ անգամ հրաշքի անունով չքեղացուցեր էր զանոնք , և շատ որովայնախօսներ գործածեցին իրենց ձիրքը բազմութիւնը խաբելու և խարդախութեամբ ձեռք ձգելու :

1 Գ.շ. Loup-garou. տճ. Գարա գօնճօլօղ :

2 Գ.շ. Revenant. տճ. խօթլադ . փերի :

լու համար այն բանը որուն ամենևին իրաւունք չունէին : Այսպէս լուզովի- կոս Պրապանդ, Ա Փրանկիսկոսի սենե- կապանը, բաւական ատենէ 'ի վեր մե- ուած մարդու մը ձայնը նմանցընելով, համոզեց անոր այրի կինը որ պարտը- կան էր իրեն կնութեան տալու աղջի- կը, և ուրիշ անգամ մը նոյն ճարտա- րութիւնը բանեցընելով լուամյափոխէ մը հարիւր հազար Փրանք մէկէն կրծեց :

Ամբողջ հատոր մը կը ձևանար թէ որ ուզենայինք մի առ մի որովայնակո- չութեան նորօրինակ, ծաղրական և ան- սովոր դէպքերուն պատմութիւնը հոս- տեղ ամփոփել : Մէկ քանի օրինակով միայն շատանանք :

« Սէն-ժիլ, կ'ըսէ արքայն լա Շա- բէլ, որովայնակոչութեան զարմանալի ձիրքը ունենալով, օր մը մտուց զիս իր ներքին խանութը . հոն կրակարանին մէկ անկիւնը գացինք նստանք, ուր ամենևին աչքէս չկորուսի զինքը, գրե- թէ միշտ երեսը նայելով : Մօտ կէս ժա- մէ 'ի վեր կը պատմէր ինծի որովայնա- կոչութենէն առաջ եկած զուարճալի տեսարանները, երբ յանկարծ մինչդեռ ինքը լուռ կեցեր էր և ես մտքով ցրուը- տեր էի, լսեցի որոշ կերպով որ մէ- կը զիս կը կանչէր անուշովս, բայց անանկ հեռուէն և անանկ անսովոր ձայնի եղանակով մը որ սիրտս դող ելաւ : « Կարծեմ թէ, ըսի իրեն, որո- վայնակոչութեամբ կը խօսիս հետս » : Ժպիտ մը եղաւ պատասխանը . բայց ձայնին ուղղութիւնը իրեն ցցունելու ատենս, որ կարծեք էի թէ զիմացի տան մը յարկէն կու գար, մեր կեցած տանը վերին ձեղուանը մէջէն, դար- ձեալ լսեցի որ խիստ որոշակի կ'ըսէր ինծի նոյն կերպով և նոյն աստիճանով որ զիս զարմացուցեր էր, Ան կողմէն չէ . և այն ատեն կարծեցի որ ձայնը սե- նեկին մէկ անկիւնէն կու գար, իբրև թէ գետնին տակէն :

» Չէի կրնար դադրիլ զարմանքէս . ձայնը բոլորովին կորսուած երեցաւ ին- ծի Սէն-ժիլի բերնին մէջ . դէմքին վրայ ամենևին փոփոխութիւն չէր ըլլար, սա-

կայն կը ջանար որ որովայնակոչի պէս՝ խօսելու ատենը՝ միշտ կէս երեսը ցու- ցընէ ինծի . այս ձայնը ըստ կամս կը խաղցընէր, ուսկից ուզէր հոնկէ կու գար . խաբէութիւնը կատարեալ էր ամենայն դիմօք : Առաջուրնէ գիտնալով ու պատրաստուած ըլլալովս հանդերձ, զգայարանքներս չէին կրնար խաբէու- թենէս զիս ետ կեցընել : Բայց ահաւա- սիկ ուրիշ ալ աւելի ծիծաղաշարժ տե- սարան մը :

» Սէն-ժիլ կը շրջագայէր անգամ մը ծեր զինուորականի մը հետ, որ միշտ բարձր 'ի գլուխ և կուրծքը տնկած կը քալէր . ուրիշ բան չէր խօսեր և ուրիշ բան պէտք չէր խօսիլ հետը բայց եթէ պատերազմներ, շահատակութիւններ, պահանջութիւններ, առանձնական կռիւններ, և որ ասոնց նման են : Որովայ- նակոչը քիչ մը չափաւորելու համար միշտ իր արուեստին վրայ խօսելու ասանկ տաղտկալի կատաղութիւնը, մը- տածեց որ իրեն դաս մը տայ :

» Երբոր հասան անտառի մը մէջ անծառ բացկեկ տեղ մը (ի Սէն-ժէր- մէն-ան-լէ) զինուորականը կարծեց թէ ծառի մը գագաթէն մէկը իրեն կը պոռար . Մարդ չգիտեր ամէն ակգաւմ գործասնէ կրած սուրը : — Ո՞վ է այս լիրբը, ըսաւ մէկէն 'ի մէկ կտրիճ զի- նուորականը : — Հաւանօրէն, պատաս- խանեց Սէն-ժիլ, հովիւ մըն է որ կ'աւ- րէ թռչուններուն բոյնը : — Անմտին մէկն է, կրկնեց առաջինը գլուխը շար- ժելով դաժան և խոժոռ երեսով մը : — Մօտեցիր, կրկնեց ձայնը որ կարծես թէ ծառէն վար կ'իջնար, կը վախնանս : — Ո՞հ, ամենևին չէ, ըսաւ զինուորա- կանը գլխարկը գլխուն վրայ հաստա- տելով և պատրաստուելով կռուի : — Ի՞նչ կ'ընես, ըսաւ Սէն-ժիլ թեէն բռն- նելով, վրադ պիտի խնտան . ադէկ կե- ցուածքը ամէն ակգաւմ քաշուքեան և շաւու չէ . շարունակեց ձայնը, միշտ ծառէն իջնալով : — Ասիկայ հովիւ չե- րևար, ըսաւ Սէն-ժիլ : — Ես հիմա ի- րեն զղջալ պիտի տամ լրբութեանը վրայ, պատասխանեց զինուորականը :

— Յիշէ Հեկտորը որ Աքիլլէսի առջևէն կը փախչէր, պոռաց ձայնը ծառին ուղբէն: — Շուտով մը զինուորականը քաշեց սուրը և խոթեց անխնայ մացառի մը մէջ որ ծառին բունին մօտ էր, և ճագար մը դուրս ելլալով սկսաւ վազել ամենայն արագութեամբ: — Ահաւասիկ Հեկտոր, ըսաւ իրեն Սէն-ժիլ, իսկ դուն՝ Աքիլլէս:

» Այս ծաղրածութիւնը հանգարտեցուց և շփոթեց զինուորականը. հարցուց Սէն-ժիլի, թէ ինչ կը նշանակէր այս ամեն բանս. և անիկայ իրեն ըսաւ որ երկու ձայն ունենալովը երկու անձի պէս կ'ըլլար. մէկն էր սովորականը զոր հիմա կը գործածէր, միւսը որ զինքը իրմէ կը հեռացընէր շատ հեռու »:

Գաղղիոյ գիտութեանց ճեմարանը շարհամարհեց քննութիւններ ընելու այս երևութիս վրայ, զոր խիստ զարմանալի կերպով կը ցուցընէր Սէն-ժիլ իր վրան, և յանձնեց Ռուա և տը Ֆուչի գիտուններուն որ գննեն: Ասոնք նախ և առաջ դիտեցին Սէն-ժիլի փորը, որուն վրայ դրած էին ձեռուրնին որովայնակոչին խօսելու ատենը, և տեսան որ փորը ամենեւին յատուկ շարժմունք մը չունէր որ կարենար ձեռնտու ըլլալ ձայնին կազմութեանը. և ասիկայ բաւական եղաւ իմանալու համար որ ինչուան ան ատեն ծուռ կարծուեր էր թէ փորուն մէջ կը ձևանար որովայնակոչին երկրորդ ձայնը: Որոնք են ուրեմն այս երևոյթին պատճառները. արբայն լա Շարէլ ճեմարանին վճիռներէն հանելով՝ կ'ընծայէ զանոնք ըմբանի (pharynx) և կոկորդին մկանանց մասնաւոր խաղի մը, խաղ զոր ամեն մարդ որ սովորական գործարաններն ունի՝ կրնայ ստանալ երկայն և անդու կրթութեամբ ամեն ջանք 'ի գործ դնելով զործարանները ճկելու: Սակայն Սէն-ժիլի համար ութը օրուան աշխատութիւնը բաւական եղեր էր այս կարողութեանս տէր ըլլալու 'ի Մարտինիկէ, ուր բոլոր ճիզը թափեց որովայնակոչի մը նմանելու համար որուն հետ բարեկամացեր էր:

Մտադրութեան արժանի բանը, որ և նպաստաւոր է անշուշտ խաբէութեան շատնալուն՝ այն է որ որովայնակոչին խօսելու կերպին մէջ օդը մասնաւորապէս կոկորդին ներսի դին զարնուելով՝ շունչ տալու միջոց և ոչ թէ դուրսը, ինչպէս կ'ըլլայ սովորական խօսելու ատեն, անով այնպէս մը կը կարծուի որ ձայնը հեռուէն կու գայ:

Գաղղիացի երևելի որովայնակոչը, Պ. Լուգ. Ապ. Գոնդ, կ'ըսէ որ ձայնը կը ձևանայ ըստ սովորութեան խոչափողին մէջ, բայց հագագին մէկալ մասերուն խաղը վանիկայ կը յօդաւորէ, և շնչառութեամբ կ'ուղղուի դէպ 'ի կուրծքը ուր և կը հնչէ:

Գոլմուգա տը Լիդէո գաղղիացի բժիշկը այսպէս կը խօսի առաջիկայ խնդրոյս վրայ. «1811ին Լէսբանեօլ բժիշկը հաստատած է իր մէկ ճառին մէջ որ գըլխաւորապէս քմաց առագաստին ձեռքով կը կերպաւորին եղանակները, առտիճանաւորելով ձայնին թանձրութիւնը, որպէս զի որովայնակոչութե պատրանքը ձևանայ: Այս կարծիքս շատ նրման է մերինին, և եթէ տարբերութիւն մը կայ այս երկու կարծեաց մէջ ան է որ Լէսբանեօլ միայն քմաց առագաստին ներգործութեանը վրայ կը խօսի, և կ'ըսէ որ անկից առաջ կու գայ որովայնակոչութիւնը, թող չտալով որ օդը քթին խոռոչներէն դուրս ելլայ: Այս գիտուն և պատուական արուեստակցիս խօսքին նայելով, մօտէն և հեռուէն եկած ձայներուն մէջ եղած տարբերութիւնն անկից է որ առջինին մէջ եղանակները բերնէն և քթէն կ'ելլան, իսկ երկրորդին մէջ՝ բերնին փորոքէն:

» Օդին ելլալուն վրայ Լէսբանեօլի ըսածը իւրաքանչիւր ոք կրնայ ճշմարտել, եթէ մանաւանդ մէկն ուղեկայ գործածել այն ձայնական մեքենակալութիւնը՝ զոր հիմա պիտի ըսենք, և որ ըստ մեզ՝ պատճառ է որովայնակոչութեան: Որովայնակոչներու պէս, կամ եթէ կ'ուզէք, փոքրէն խօսելոռ համար, ինչպէս կ'ըսուի սխալմամբ խօսակցութեան մէջ, հարկ չէ ունենալ շնչառու-

թեան և ձայնի գործարաններուն մասնաւոր շինուածք մը . բաւական է որ ձայնահասն կազմածին վերջին մասը չափաւոր փափուկ և ճկուն ըլլայ, և քիչ մը սովորութեամբ ու կրթութեամբ շատ դիւրաւ կրնայ մէկը յաջողցնել որովայնակոչութեան արուեստին ձայնական խաբէութիւնները :

» Ինչպէս որ մէկ կողմանէ մարդիկ գաղտնի և ակամայ միտում մ'ունին ամեն տեսած բաներնուն նմանելու, և մէկալ կողմէ դիտուած է որ ձայնի գործարանէն աւելի չկայ ուրիշ գործարան մը որ յարմար ըլլայ նմանցնելու, կարծեմ շատ անտեղի բան ըսած չեմ ըլլար եթէ զուրցեմ որ մէկը, մանաւանդ եթէ երիտասարդ է, և կ'ապրի որովայնակոչի մը քովը, քիչ ատենէն գրեթէ ակամայ ինքն ալ որովայնակոչ կ'ըլլայ . նման անոր որ երկայն ժամանակ միատեղ ապրող երկու անձինք վերջապէս մէկ ձայնի աստիճան կ'առնուն, և որ աւելի զարմանալին է՝ քիչ շատ մի և նոյն եղանակ :

» Համոզուած՝ որ որովայնակոչ ըլլալու համար բաւական է բարեկազմ և դիւրաշարժ ձայնական գործարաններ ունենալը, ինչպէս նաև խիստ լայն թոքեր՝ որոնք օդոյ համար թափանցելի ըլլան, մենք ալ կրցանք քիչ մը կրթութեամբ՝ ամեն ձայնի եղանակներուն կազմութեանը վրայ մեր վրայ փորձեր ընելով՝ խիստ աղէկ նմանիլ որովայնակոչներու ըրածին, և անոնց հաւասար վարպետութիւններ ընելու համար մեզի ուրիշ բան չէր պակսեր՝ բայց եթէ աւելի մեծ վարժութիւն մը, և ամենէն աւելի՝ որ և իցէ ձայնի ելէջքներուն նմանցնելու կարողութիւնը :

» Որովայնակոչի պէս խօսելու համար բաւական է բանեցընել հետագայ ճարտարութիւնը . նախ և առաջ երկայն շունչ մ'առնելէ ետքը, որուն վախճանն է կուրծքը օդոյ մեծ քանակութիւն մը մտցընելը, պէտք է ամենայն ուժով կծկել քմաց առագաստը, որպէս զի բարձրանայ և գոցէ բոլորովին քթի խողուններուն վերին ծակը . նը-

մանապէս պէտք է ամփոփել լեզուին արմատը, ըմբանը, խոչակը, կոկորդին երկու կողմի նշաձև գեղձերը, վերջապէս որկորին բոլոր մասունքը, և միանգամայն լեզուին ծայրը վերին ծամելեաց ակուաններուն ետևը հաստատել, անանկ որ ձայնական գործարանին գլուխը բոլորովին անշարժ ըլլայ : Չայնը պէտք է դուրս հանել ըստ կարի թոքերէն քիչ օդ փախցընելով, և այս ալ յաջողցընելը դիւրին է եթէ ուժով մը կծկէ փորուն, կրծոց և վզին բոլոր մեկանունքը :

» Կը տեսնանք որ որովայնակոչներուն զլխաւոր գաղտնիքն է թող չտալը որ օդը քթէն ելլէ, այլ բերնէն հանել ծանր և բռնի կերպով մը, որով ձայնը խլութիւն մ'ունենայ և հեռուէն եկած ձայնին տկարութիւնը և աստիճանը : Եթէ մէկն ուզէ ալ աւելի կատարեալ ընել խաբէութիւնը՝ ձայնին անանկ եղանակ մը տալով որ կարծուի թէ որոշեալ տեղէ մը կու գայ, պէտք է ճարտարութեամբ դիմացինին ուշադրութիւնը հոն գրաւէ, և այն ուղղութեամբ խօսի՝ աւելի կամ պակաս ամփոփելով քմաց առագաստը, որպէս զի ձայնը հեռանայ կամ մօտենայ ըստ կամու : Պէտք է նաև ջանալ որ խօսելուն ատենը կարելի եղածին չափ քիչ շարժի ստորին ծամելիքը, և կերպով մը գոց բերնով բառերը արտաբերէ . վերջապէս որովայնակոչը պիտի նայի որ կէս դէմքը երեցընէ, որպէս զի երեսը ալ աւելի խաղաղ ըլլայ և կուրի մը երեսին նման դժագրութենէ զուրկ . ասանկով կրնայ վստահ ըլլալ ամենէն արթուն և վարպետ մարդն ալ խաբելու » :

Գլխաւոր հոչակեալ որովայնախօսներն են Գաղղիացուց մէջ Սէն-ժիլ, Շմէ, Պոուէլ, Ֆից-ճէյմս, Լուդ. Ապոլ. Գոնդ (որ դեռ կ'ապրի) և Ալեքսանդր. Իսկ մեր Պոլսեցի ընթերցողներուն մէջ թերևս և ոչ մէկը գտնուի որ չճանչնայ համազգի Գոռքպաև Յովսէփը, որուն ըրած խաղերը խիստ շատ և զանազան են, և ամենուն ծանօթ ըլլալով աւելորդ կը համարինք հոս պատ-

մելը : Ուողըր Սգող անգղիացի երևելի բանաստեղծը ընծայած է պզտիկ ոտա նաւոր մը վերոյիշեալ Ալեքսանդրին զոր ահաւասիկ արձակ կը թարգմա նենք .

ԱՌ Պ . ԱԼԵՔՍԱՆԴՐ .

Ատենաք հին Անգղիոյ մէջ գէշ աչքով կը նայուէր անիկայ որ նոյն գըլ խարկին տակ երկու երես ունէր . հապա ինչ պիտի ըսէին հրամանքիդ համար որ այսչափ անթիւ երեսներ ունիս , և անցեալ գիշեր մի միայն գլխարկի տակ քսան այլևայլ գլուխներ ցրցուցիր մեզի : Ըսէ ուրեմն ճշմարիտը , ո՛վ արչի-խարբեայ . գեղեցիկ ես թէ տգեղ , ծեր թէ երիտասարդ , մարդ չէ նէ կընիկ , սղայ , և կամ շոն թէ մուկ , կամ տան մը մէջ ինչ կենդանի էակ որ կայ ամենն ալ քու վրադ կը կրես : Ի՞նչ կ'ըսեմ տան մը բոլոր կենդանի էակները , այլ և ամեն գործիքներն ալ . դարբինի խանութ մ' ունիս ներսիգիդ , սղոց , գրոց , պտուտակ : Ամեն բանէ առաջ ան նայինք թէ հրամանքդ մէկ հոգի մըն ես . կարծեմ թէ գոնէ գոնէ Ալեքսանդր և ընկերուքիսն պիտի ըլլաս : Բայց որովհետեւ խումբ մըն ես , ժողովք մը , գումար մը , ես շերիք (գատաւոր) ըլլալովս պէտք է որ պաշտօնս կատարեմ . այո , փոխանակ հրամանքիդ ամեն հրաշալիքները երգերովս հռչակելու՝ պէտք է որ վճիռը կարգամ և հրամայեմ որ ցըրուիս :

Գարով Ֆից-ձէյմսի լսենք ինչ որ կը զուրցէ իրեն վրայ Ռոպէրդսըն աճաբարը իր Յիշատակագրոց մէջ . « Գեղեցկահասակ և վայելչադէմ մարդ մը ներկայացաւ ինձի առաւօտ մը . ըսաւ որ հեծեալ ոստիկանութեան գնդին մէջ կը ծառայէր և բոլոր զինուորները կը զըլարճացընէր ձայնական գործարանին նորօրինակ յատկութեամբը : Պատանեկութենէն 'ի վեր եկեղեցական վիճակի օահմանուած ըլլալով , դասին մէջ երգելու ատեն տեսեր էր որ կրկին ձայն

ունէր , և աւելի կամ պակաս սկսեր էր նմանցընել մէկուն մէկային խօսուածքը . իմ դիմացս ալ քանի մը փորձեր ըրաւ , և հարցուց թէ արդեօք կրնայի բանի բերել իրեն շահուն համար բնութեան այս խաղը . մէկէն 'ի մէկ հասկըցայ թէ որչափ օգտակար կրնար ըլլալ ինձի Ֆից-ձէյմսի ասանկ զարմանալի կարողութիւնը (վասն զի խօսքս իրեն վրան է) , և գնեցի իրեն որովայնակոչութիւնը , վստահ ըլլալով որ իմ ամեն տեսակ ըրած խաղերուս մէջէն աւելի զուարճալիները իրենները պիտի ըլլային :

« Երկայն ատենէ 'ի վեր Բարիդ որովայնակոչի խօսքը չէր եղած . հազիւ թէ կը յիշէին Սէն-ժէրմէն կոմսը , որուն հանճարը հռչակած է Պ . լա Շաբէլ իր Որովայնակոչուքիսն գրքին մէջ : Ֆից-ձէյմսի առաջին փորձերը յաջողեցան լիովի և ալ աւելի տարածեցին իմ աճաբարութեանս համբաւը : Դժբաղդաբար հանճարը քիչ էր , և միշտ երբոր հանդիսականաց կ'երևնար , անհամ կատակներ կը փախցընէր . շատ կը նեղուէի զինքը զսպելու համար , և պէտք էր որ ամեն անգամ քովը գըտնուէի և շարունակ նշանացի արգիլէի որ այնպիսի պաղուկ զուարճախօսութիւններ չընէր : Ուրիշ կողմանէ գերազանցած է քան զամեն նախորդները և իրեն նմանողները , և Պ . Գոնդ և Պ . Պոռէլ որ իրմէ ետքը եկան՝ չեն կրնար իրեն նախանձորդներն ըսուիլ : Երբոր երկու անձանց մէջ խօսակցութիւն մը կը սկսէր , որոնց մէկը կ'ենթադրուէր մառանը և միւսը վերնայարկը , ժողովուրդը և ոչ շրթունքներուն շարժիլը կը տեսնէր , և փորձութիւն կ'ունենար մէյմը մառան մէյմը վերնայարկը վազելու : Նոյն ժամանակները թոյլ տըրուած էր որ օրագիրները փողոցներու մէջ կանչելով կարենան ծախուիլ : Ֆից-ձէյմս հրաշալի կերպով կը նմանցընէր մունետիկներուն ձայնը , որոնք կը մտենային պատուհանը և հետզհետէ կը հեռանային անանկ ճիշդ և անանկ բնական որ որովայնակոչին կարողութիւնը

ամեննն աղէկ ճանչցողներն ալ կը խաբուէին : Հետագայ պատմութիւնը գաղափար մը կրնայ տալ իր ճարտարութեանը :

» Ֆից-ձէյմս օր մը պանդոկի մը մէջ ցորեկուան կերակուրի նստեր էր շատ մը բարեկամներով . սեղանին վերջերը ուզեց հացակիցներուն բան մը խաղալ : Սրահին մէջ տեղը կրակարան (poêle) մը կար որուն խողովակը հաղորդուած էր ուրիշ գոցուած վառարանի (cheminée) մը . Ֆից-ձէյմսի նստած սեղանատախտակը վառարանին քովն էր : Մէյմ'ալ խօսակցութիւն մը սկսաւ իրեն և ուրիշի մը հետ որ վառարանին մէջ ծածկուած սեպեց . ընկերները զարմացած մտիկ կ'ընեն , տանտէրը կը սարսափի , աղջիկները կը վազեն քաղաքական զօրաց ձայն տալու : Ֆից-ձէյմս առաջ կը տանի ծաղրածութիւնը . կը պնդէ որ գող մը պահուրտած է վառարանին մէջ , որ չկրնար ելլալ , անօթի է , յանցանքը կը խոստովանի , և հաց կը խնդրէ իրեն արժանաւոր պատժոյն սպասելով : Զինուորները վրայ կը հասնին , կը հարցընեն գողին թէ ո՞վ է , հոն ինչ բան ունի . գողը պատասխան կու տայ . կը մտածեն որ փրկցընեն վառարանը . ինչ կ'ընէ Ֆից-ձէյմս . կրակարանին քով կ'երթայ , կը խօսի , և ամենքը կը կարծեն որ գողը խողովակին մէջէն կրակարանը անցեր է : Կատակը ինչուան հոս կեցաւ . որովայնակոչը յայտնեց գաղտնիքը . զինուորները խնտալով դուրս ելան , և իւրաքանչիւր ոք իր տեղը դարձաւ , որ սեղան որը խոհանոց , ամենն ալ խընտալով և շնորհաւորելով Ֆից-ձէյմսի իրեն եզական ձիրքը զոր ընդուներ էր բնութենէն :

» Ուրիշ անգամ գրեթէ նոյնպիսի վարպետութիւն մ'ըբաւ զինուորագրութենէ փախած մարդ մը ձեռքներով որ վառարանին հրարգելին ետեէն խղճակի ձայն մը կը հանէր : Ամենքը սարսափած իրարու կը հարցընէին թէ ինչ պիտի ըլլար : « Ինչու կը վախնաք , ըսաւ Ֆից-ձէյմս , մինակ և վշտակիր մար-

դէ մը » . և հրարգելը բանալով տեսաւ որ մարդ չկայ : « Ուր պահուրտեր ես ուրեմն , պոռաց : — Կը փախչիմ , կը փախչիմ , պատասխանեց ձայնը որ վեր ելլալով կը հեռանար . զինուորագրութենէն եմ և դու զիս բռնել պիտի տաս » : Օրէնքը խստիւ կը պատուհասէր զինուորագրութենէ փախչողին ապաստան տուողները . ուստի շուտով իմացուցին ոստիկանութեան պաշտօնէին որ եկաւ ու զինուորներով տունը շրջապատեց : Վերնայարկը կ'ելլեն , և նոյն ձայնը կը կրկնուի մօտիկ վերնայարկներուն և տանիքներուն վրայ . և մինչդեռ իւրաքանչիւր ոք դասալիքը կը փնտռէր , Ֆից-ձէյմս որ ան ատեն այնչափ ճանչցուած չէր , կը թողու կ'երթայ կամացուկ մը , անանկ որ ոստիկանութեան պաշտօնեայն և զինուորները յոգնած ամեն ծակ ամեն անկիւն փնտռելէ՝ ետ կը դառնան արիւծ և առանց զիտնալու որ խաբուեր էին :

» Օր մ'ալ գերեզմանոցի մը մէջ մինչդեռ բազմութիւն մարդկան շիրիմ մը կը դիտէին , յանկարծակի խօսել տուաւ մեռելոյն և ամենուն արիւնը պաղեցուց :

» Անգամ մը փառաւոր հարկինքի ատեն սկսաւ խորհրդական կերպով մը տաք տաք խօսիլ մէկու մը հետ որ սեղանին տակը պահուրտեր և ջանացեր էր արծաթէ դգալ մը գողնալու . այնպէս բնական էր խօսակցութիւնը որ բոլոր խաթունները ոտք ելան . « Գո՛ղ , գո՛ղ » կանչելով : Ֆից-ձէյմս ամենէն աւելի կը յաջողէր հողմարգելի մը ետև խաղացածներուն մէջ , ինչպէս ան ակռայ հաւնողիւր որ փտտած ակռային տեղ հետզհետէ բոլոր ողջ ակռաները կը քաշէր , և ետքէն ուրախակից կ'ըլլար կիսամեռ մարդուն՝ որ հիմա մաքուր բերան մ'ունէր . հիշատակելի յորում շատ չափէն կ'ելլար . կրօնաշորներուն կամ վաւիքիւր յորում հանգիստակա՞նք կը լսէին խիստ որոշ և զարմանալի կերպով զանգակին հնչելը , երգիոնին ձայնը , դասերուն երգերը , և այլն :

» Ստուգիւ բան մը չի պակասիր Ֆից-
 ճէյմսի փառացը , որով հետև իրեն ներ-
 բողեան կարգացողն եղած է երևելին
 լալանտ . լսենք թէ ինչպէս կը խօսի
 այս գիտուն աստղաբաշխը օրագրի մը
 մէջ : « Երբոր լա Շաբէլ հրատարա-
 » կեց 1772ին իր Որովայնակոչութեան
 » գիրքը , երկայն հասուած մը քաղե-
 » լով անկից գրի Գիտնոց օրագրին
 » նոյեմբեր թուոյն և իվերտեօնի Հա-
 » մայնագիտութեանը մէջ : Պ . Սէն-
 » փիլ , որ Սէն-Փերմէն-ան-լէի մէջ
 » մանրավաճառ մըն էր , ունէր այս կա-
 » ռողութիւնս , և ճեմարանին որոշեալ
 » քննիչները վկայեցին որ ամենայնիւ
 » կատարեալ եղած էր խաբէութիւնը՝
 » ձայնին հեռաւորութեանը և ուղղու-
 » թեանը նկատմամբ . սակայն երբոր
 » գիտութեանց ճեմարանն եկաւ 1770ի
 » դեկտեմբերի 22ին , հանդիսականք
 » շատ զարմանք մը չցուցուցին , կամ
 » առաջուրնէ պատրաստուած ըլլալ-
 » նուն համար , և կամ թէ Սէն-Փիլ
 » վախկոտութեամբ շարժեցաւ : Բայց
 » երբոր լսեցի Ֆից-ճէյմսը Ռոպէրդսը-
 » նի քով , տեսայ որ ամենաճիշդ էին
 » ինչ որ կը պատմէր լա Շաբէլ վան-
 » Տալէն , Պրոտոյէն և ուրիշ հեղինակ-
 » ներէ յիշուած որովայնախօսներու
 » վրայ : Տեսայ որ իմ քովս կեցած պա-
 » տասխաններ կը հանէր կրակարանի
 » մը խորէն , վառարանի մը ծայրէն , և
 » ուրիշ որ և իցէ տեղէ սրահին կամմեր
 » ձաւոր սենեկներուն . և բնաւ չտարա-
 » կուսեցայ վերոյիշեալ գրուածքին մէջ
 » եղած զարմանալի պատմութեանց
 » վրայ : Բայց Պ . Մանփէն որ նոյնպէս
 » որովայնակոչ մըն է , բացատրած է
 » օդուն և բերնին մեքենականութիւնը
 » որոնք հարկաւոր են այս եզական և
 » դոյզնագիւտ արուեստիս համար , զոր
 » յանդէպս անուանած են ալոուստ
 » որովայնակոչութեան » :

« Ֆից-ճէյմս մեռաւ 1815ին Մոն-
 մարզրի բլուրներուն վրայ խազախնե-
 բու ձեռքէն , այն օրը յորում շատ սու-
 ղի նստաւ դաշնակից թագաւորաց մայ-
 բաքազաքին պատերը դիտելու զուար-

ճութիւնը , և սակայն չազատեցաւ Բա-
 րիզ » :

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԱՐԱՆՈՑ

Վիրք , Ափխազք և Զերքեզք .

Սյն լեռնոտ երկիրը որ Սև ծովէն
 մինչև 'ի Կասպից ծովը անընդհատ ձը-
 գուած է՝ կ'ըսուի Կովկասեան պարա-
 նոց . իր լեռնահովիտներուն մէջ հնա-
 գոյն ժամանակէ 'ի վեր կը բնակին ան-
 թիւ մանր ազգեր , որոնցմէ շատը բնիկ
 տեղացիք են , ոմանք ալ մնացորդք ա-
 սիական հրոսից , որոնք ժողովրդոց մեծ
 գաղթականութեան ատեն , երբ կրկին
 և կրկին կ'անցնէին Կովկաս լեռանց
 անդիի կողմը՝ ասոնք ասդիի կողմը ընտ-
 րեցին իրենց բնակութեան տեղ : Գրե-
 թէ ամենքն ալ ունին իրենց առանձին
 լեզու՝ որոնց հնութիւնն ալ գրեթէ
 մարդկութեան ծագմանը չափ հին է :
 Իրենց կերպարանացը վրայ կը նշմա-
 րուին Ասիոյ և Եւրոպիոյ գլխաւոր ազ-
 գաց նշանական զիծերը , որոնք առան-
 ձին նշանական բարք և բնոյթ ունենալ-
 նին կը յայտնեն : Վաղեմի և յիշատա-
 կաց արժանի գրուածք , ինչպէս Ս . Գիրք ,
 Պոռմիթէոսի այլաբանութիւնն և կամ
 առասպելն առ Յոյնս , Արդոնաւորդաց
 հուշակաւոր արշաւանքն , և ուրիշ ան-
 համար սկանտինաւեան ազգաց աւան-
 դութիւնք , զմեզ 'ի Կովկաս կը տանին ,
 և կը բռնադատեն որ հոն ալ փնտռենք
 այն կէտերէն մէկը՝ որոնցմէ մարդիկ
 ցրուեցան երկրագնտիս մէկ մեծ մա-
 սին վրայ : Բայց այս նիւթս թէպէտ և
 կարևոր՝ զմեզ կրնայ շատ հեռացընել
 մեր նպատակէն :

Եօթը կովկասեան ազգաց մէջէն ,
 վասն զի եօթն զանազան լեզուներ կը
 խօսին , առաջին կը համարուի վրաց ազ-
 գը : Ի Հայոց վիրք անուանեալները յա-
 րևելեայց կիւրճի և յեւրոպացոց քիչ
 շատ նոյն անուամբ կը կոչուին : Վիրք
 անուան ծագումը որոշ չենք գիտեր ,